ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Անուշ Բարսեղի Բարսեղյանի «Վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշների ինքնաբուժման համուղղումը դեղատանը» թեմայով ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ինքնաբուժումը անխուսափելի և տարածված պրակտիկա է ամբողջ աշխարհում: Թեև այն հանրային առողջապահության կազմակերպման տեսանկյունից ունի դրական դեր, սակայն ուղեկցվում է մի շարք վտանգներով, ընդ որում ոչ միայն անհատի, այլ նաև ընդհանուր առողջապահական համակարգի համար:

Հատկապես զարգացող երկրների առողջապահական համակարգերի հիմնախնդիրներից մեկն է հանդիսանում ինքնաբուժմամբ պայմանավորված վտանգների կառավարումը: Այդ նպատակով իրականացվում են բազմակողմանի միջոցառումներ, այդ թվում՝ փորձ է արվում բարձրացնել հասարակության ընդհանուր իրազեկվածությունը ինքնաբուժման սկզբունքների, դրա սահմանների և հավանական վտանգների վերաբերյալ: Ամբողջ աշխարհում, հասարակության իրազեկման, ինչպես նաև բուժառուների ինքնաբուժման ուղղորդման գործում յուրահատուկ տեղ է զբաղեցնում դեղատնային օղակը:

Անուշ Բարսեղյանի աշխատանքը, ինքնաբուժման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ազգաբնակչության իրազեկվածության բարձրացմանը և ինքնաբուժման ուղղորդման հարցում դեղատնային օղակի ներգրավվածության մեծացմանը ուղղված աշխատանքների կարևոր մաս է կազմում:

Հետազոտության ընթացքում գնահատվել է վերին շնչուղիների սուր վարակների և գլխացավերի դեպքում ինքնաբուժման տարածվածությունը, դրանով պայմանավորված վտանգների կառավարման մակարդակը, ինչպես նաև ինքնաբուժման ուղղորդման գործում դեղատնային օղակի մասնագետ խորհրդատուների պատրաստվածությունը և ներգրավվածությունը:

Հետազոտողը հիմնավորել է թեմայի արդիականությունը, հստակ ձևակերպել է աշխատանքի նպատակը, խնդիրները, մատնանշել է ստացված արդյունքների գիտական նորույթը և կիրառական նշանակությունը:

Հետազոտությունն իրականացվել է հատույթային ձևաչափով, այն ներառել է քանակական և որակական մեթոդներ: Քանակական փուլում անցկացվել է հարցաթերթիկային հարցում՝ 1308 բուժառուների և 597 դեղատան աշխատակիցների շրջանում՝ պատահական ընտրությամբ: Ընտրանքի ծավալը հաշվարկվել է Կոքրանի բանաձևով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության մարդաքանակը և Երևան քաղաքի դեղատների քանակը: Որակական փուլում կազմակերպվել են 6 ֆոկուս խմբեր՝ տարիքային, սեռային, կրթական և բնակավայրային տարաբնույթ կազմով, ընդհանուր 60 մասնակցով: Մասնակիցների և ֆոկուս խմբերի թիվը որոշվել է ֆոկուս խմբերի մեթոդաբանության ուսումնասիրության հիման վրա:

Իրականացվել է հավաքագրված տվյալների բազմակողմանի վերլուծություն, որը թույլ է տվել ոչ միայն բացահայտել ինքնաբուժման տարածվածությունը, այլև խորությամբ հասկանալ այն սոցիալական, մշակութային և առողջապահական գործոնները, որոնք պայմանավորում են այդ վարքագիծը: Տվյալների վերլուծությամբ ստացվել է բավականին մտահոգիչ պատկեր և՛ ինքնաբուժման սկզբունքների, դրա սահմանների և հավանական վտանգների վերաբերյալ բուժառուների գիտելիքների, և՛ դեղատնային օղակի մասնագետ խորհրդատուների պատրաստվածության և ներգրավվածության հարցերում:

Արձանագրված արդյունքները, միանգամայն հիմնավորել են հետազոտողի կողմից, որպես հետազոտության խնդիր սահմանված, ինքնաբուժման գործընթացի համուղղմանը և ոչ ադեկվատ ինքնաբուժման անցանկալի հետևանքների նվազմանը ուղղված միջոցառումների և ծրագրերի մշակման անհրաժեշտությունը և կարևորությունը:

Հետազոտության շրջանակներում մշակվել է սպառողների համար նախատեսված տեղեկատվական ուղեցույց՝ ուղղված ինքնաբուժման գործընթացի պատշաճ և պատասխանատու կազմակերպմանը: Հարկ է նշել, որ հետազոտողի կողմից ուղեցույցի

կիրառելիության և արդյունավետության գնահատման նպատակով իրականացվել է պիլոտային փորձարկում՝ 60 մասնակցի ներգրավմամբ:

Ստացված արդյունքները վկայում են, որ նմանօրինակ տեղեկատվական նյութերի մշակումը և տարածումը կարող են նպաստել հանրության շրջանում պատասխանատու ինքնաբուժման մշակույթի ձևավորմանը:

Ատենախոսության եզրակացությունները և դրանց հիման վրա ձևակերպված առաջարկությունները հիմնավորված են և լիովին համապատասխանում են հետազոտական նյութին:

Ատենախոսությունում ներկայացված գիտական արդյունքները բնութագրվում են արդիականությամբ և կիրառելիությամբ: Դրանք արտացոլվել են հեղինակավոր տեղական և միջազգային գիտական հանդեսներում հրապարակված 10 գիտական հոդվածներում:

Ընդհանուր առմամբ բարձր գնահատելով ատենախոսությունը, այնուամենայնիվ հարկ եմ համարում նշել որոշ նկատառումներ, որոնք սակայն չեն նսեմացնում աշխատանքի արժեքը, կարևորությունը և նշանակությունը.

- Ցանկալի կլիներ խուսափել «դեղատան աշխատող» ձևակերպումից, կիրառելով դեղատանը աշխատող դեղագետի կամ դեղագործի դերը ընդգծող ձևակերպում,
- Ազգաբնակչության շրջանում հարցումներն իրականացվել են ՀՀ տարբեր մարզերում, մինչդեռ դեղատնային օղակում հարցումները իրականացվել են միայն Երևան քաղաքում: Մարզերում ինքնաբուժմամբ պայմանավորված վտանգների ամբողջական վերլուծության համար ցանկալի կլիներ ընդգրկել նաև մարզերի դեղատնային օղակները,
- Նկատվում են առանձին անհաջող արտահայտություններ, ինչպես նաև որոշ խմբագրական թերություններ:

Բերված թերությունները կրում են խմբագրական բնույթ և ոչ մի կերպ չեն կարող ազդել աշխատանքի դրական գնահատականի վրա:

Ելնելով վերոնշյալից գտնում եմ, որ Անուշ Բարսեղի Բարսեղյանի «Վերին շնչուղիների սուր ռեսպիրատոր վարակների և գլխացավի ախտանիշների ինքնաբուժման համուղղումը

դեղատանը» թեմայով դեղագործական թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն, արդիական թեմայով իրականացված գիտական աշխատանք է: Աշխատանքը հիմնված է մեթոդաբանորեն ճշգրիտ ուրվագծված նպատակի, հետազոտման ժամանակակից եղանակների և վիճակագրորեն հավաստի տվյալների վրա:

Ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացված պահանջներին, իսկ հեղինակը լիովին արժանի է ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
Մ. Հերացու անվան ԵՊԲՀ,
Ֆարմակոլոգիայի ամբիոնի ավագ դասախոս,
դեղագործական գիտությունների թեկնածու՝ Ս.Տ. Քարամյան

Ս.Տ. Քարամյանի ստորագրությունը
հաստատում եմ, Մ.Հերացու անվան
ԵՊԲՀ գիտական քարտուղար, բ.գ.դ. պրոֆ Տ.Գ. Ավագյան

12.06.2025